ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ԷԱՃԾՁԲ-7/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 13-ը մարտի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Էրիզ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության կոնսորցիումի պայմանագիր «Մագիա» ՓԲԸ հետ/՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասլանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 20.02.2019թ. կնքված № ԷԱՃԾՁԲ-7/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի (Համաձայնագրի) գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ գնման ժամանակացույցում նշված զորամասերի հացաթխման ծառայության մատուցման մասով, ըստ սույն համաձայնագրին կից Հավելված N 1-ի:

1.2 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **43 829 059 (քառասուներեք միլիոն ութ հարյուր քսանինը հազար հիսունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ (Հավելված N 2):

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 2 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Էրիզ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 11500521818118 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00089186 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ | Տնօրեն |
| ՅՈԼՅԱՆ | Ա.ԱՍԼԱՆՅԱՆ |

Հավելված N 1
№ ԷԱՃԾՁԲ-7/1-2 գնման պայմանագրի N2 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակի և եռամսյակների 2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին կիսամյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ |
| 1 | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Արմավիրի տարածաշրջան) | կգ | 35397 | 170 | 6017490 | 17700 | 8900 | 8797 |
| 2 | հացաթխման ծառայություն, այդ թվում | դրամ | 1 | | 15695589 | | | |
| | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Լոռու, Դիլիջանի և Շիրակի տարածաշրջաններ) | կգ | 82111,5 | 170 | 13958955 | 35700 | 21200 | 25211,5 |
| | 10724 զ/մ | կգ | 7200 | 162 | 1166400 | 3600 | 1800 | 1800 |
| | 25149 զ/մ | կգ | 405 | 168 | 68040 | 405 | | |
| | 42285 զ/մ | կգ | 1343 | 168 | 225624 | 1343 | | |
| | 93353 զ/մ | կգ | 192 | 168 | 32256 | 192 | | |
| | 43755 զ/մ | կգ | 515 | 147 | 75705 | 515 | | |
| | 56265 զ/մ | կգ | 866 | 147 | 127302 | 866 | | |
| | 95532 զ/մ | կգ | 281 | 147 | 41307 | 281 | | |
| 3 | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Բերդի և Մեհրաբի տարածաշրջաններ) | կգ | 94697 | 170 | 16098490 | 48000 | 23500 | 23197 |
| 4 | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Ճամբարակի և Իջևանի տարածաշրջաններ) | կգ | 35397 | 170 | 6017490 | 17700 | 8900 | 8797 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԶՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Ն. Զարյան 24
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150052818118
ՀՎՀՀ 00089186
Տնօրեն

Ա.ԱՍԼԱՆՅԱՆ

Հավելված N 2
№ ԷԱՃԾՁԲ-7/1-2 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | CPV-ի կոդը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2020թ. | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Արմավիրի տարածաշրջան) | 98391170/9 | 3009000 | 3009000 | 3009000 | 3009000 | 4522000 | 4522000 | 4522000 | 6017490 | 6017490 | 6017490 |
| 2 | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Լոռու, Դիլիջանի և Շիրակի տարածաշրջաններ և այլ զորամասեր) | 98391170/11 | 7222434 | 7222434 | 7222434 | 7222434 | 11118034 | 11118034 | 11118034 | 15695589 | 15695589 | 15695589 |
| 3 | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Բերդի և Մեհրաբի տարածաշրջաններ) | 98391170/7 | 8160000 | 8160000 | 8160000 | 8160000 | 12155000 | 12155000 | 12155000 | 16098490 | 16098490 | 16098490 |
| 4 | հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Ճամբարակի և Իջևանի տարածաշրջաններ) | 98391170/10 | 3009000 | 3009000 | 3009000 | 3009000 | 4522000 | 4522000 | 4522000 | 6017490 | 6017490 | 6017490 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏՎ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Ն. Զարյան 24
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150052818118
ՀՎՀՀ 00089186
Տնօրեն

Ա.ԱՍԼԱՆՅԱՆ